

3202

491.99-8

U-44

1895

2500/2597

1895. № 1344.

Հրատարակութիւն Ն. Տ. Ղևոնդեանի

ԱՅԿԱՊՈՒԹՅԱՆ
ԻՆՏԻՄԱՆ
ԻՆՏԻՄԱՆ
Ազգային Գրքեր
ՍՍՏՐ

Մառուպ
Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ՌԻՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԿ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ



ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԳ ՏԻՊ

259

Գինն է 25 կոպ.

Тифлисъ
Типографія М. Варгавица, Велям. № 7.
1895

2010

91.99-8
Ա-44

2002

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
1925

Հրատարակութիւն Ն. Տ.-Ղևոնդեանի

491.99-8

Գ. ԱՂԱՅԵԱՆՑ

Ա-44

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՌԻՍՈՒՄԵ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԳ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՏԱՄԵՐԿՈՒԵՐՐՈՐԴ ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի, Վելիամինով, փող. № 7.

1895

ՀԱՅՏՈՒՆԻ
ԿՆՏՆՈՒՄ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ

ՀԱՅՏՈՒՆԻ

ՀԱՅՏՈՒՆԻ

Дозволено Цензурою. Тифлисъ, 5-го Сентября 1895 г.

ՀԱՅՏՈՒՆԻ

50483-ախ

ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ
ՀԱՅՏՈՒՆԻ

36213-66

արտ

տատ տար արտ

մարտ

մարտ, մատ, տամ, ատամ, արամ.

մարտը

մարտը, տատը, մատը, արտը, արամը.

մարտը տալիս է

լիս է

տալ, լալ, էլ, սէլ, իմ, սիմ, միս, մաս,
էր, սէր, տէր, սար, սալ, լար, սիրտ,
ամիս, սամի, սարի, տարի, մարի, մասիս,
մասրի, մատիտ, մարիամ.

Մարտը ամիս է:

Մի ամիս է մարտը:

Մասիսը սար է:

Արամ, արի, մի մատիտ տամ:

Մարիամ, արի, իմ մատիտը տար:

Մարտը տալիս է ճնճաղիկ:

Ճնճաղիկ

ձի, ինձ, տանձ, սանձ, սալ, ծամ, ծիտ, ծիծ, սան, նան, տակ, տիկ, կէս, մէկ, համ, կալ, լակ, կար, նալ, նամ, աղ, տաղ, մաղ, ծաղիկ, կաղին, իլիկ, կաղնի, կարաս, Մինաս.

Մարտը ճնճաղիկ է տալիս:

Մարտ ամիսը ճնճաղիկ է տալիս:

Ջնճաղիկը մարտին կըլինի:

Մարտ ամսին ճնճաղիկ կըլինի:

ա. է. ը. ի.
մ. ը. տ. ձ. ն. կ. ղ. ծ. լ. ս.
Մ. ր. Տ. ջ. Ն. Կ. Ղ. Ծ. Լ. Ս.

Ապ—րի—լը կա—պոյտ մա—նու—շակ.

պ. շ. ու. ոյ.

պապ, պաս, պատ, կապ, ուր, ում, ուլ.

էշ, շուն, ուշ, շուտ, նուշ, կոյս, լոյս, ծոյլ. կատու, կաշի, շամամ, մաշիկ, Արշակ.

կապած, անկապ, պանիր, կապոյտ, Աուկաս.

Ապրիլը տալիս է կապոյտ մանուշակ:

Մանուշակը կապոյտ ծաղիկ է:

Կապոյտ մանուշակը ծաղկում է ապրիլին:

Ապրիլին ծաղկում է կապոյտ մանուշակը:

ա. է. ը. ի. ու. ոյ.

լ. ծ. կ. ձ. ղ. մ. ն. շ. պ. ս. տ. ր. ւ.

Ա. է. Ը. Ի.

Լ. Ծ. Կ. Ձ. Ղ. Ն. Շ. Պ. Ս. Տ. Բ.



շուն

Մայիսին բացւում է վարդը.

այ. ց. վ. դ.

այս, այդ, այն, բայց, բան, բոյս, բաց.

լաց, ցուրտ, դա, դու, դաս, սարդ.

վաղ, վաշ, վար, վուշ, սայլ, մայր, այծ.

այսպէս, այդպէս, այնպէս, վայրի.

Վարդը մայիսին է բացւում:

Մայիսին վարդը բացւում է:

Կարմիր վարդը բացւում է մայիսին:

ա. է. ը. ի. ու. ոյ. այ.

բ. դ. լ. ծ. կ. ճ. դ. մ. ն. շ. պ. ս. վ. տ. ր. ց. ւ.

Ա. Է. Ը. Ի.

Բ. Դ. Լ. Ծ. Կ. Գ. Մ. Ն. Շ. Պ. Ս. Վ. Տ. Բ. Է.



այծ

Սոխակը երգում է անուշակ.

ո. է. գ. խ.

սով, ծով, կով, բոխ, խակ, խաղ, խամ.

խուլ, մուխ, մեխ, սեխ, դեղ, գիր, գոմ.

գոյն, գայլ, գող, դող, տող, ցեղ, ցեխ.

Գեղամ, Գրիգոր, գերի, խախալ, խաղող.


Սոխակը շատ անուշ է երգում:

Սոխակի երգը շատ անուշ է:

ո. աւ.

որ, որպէս, որդի, ոսկի, որբ, որդ, որս.

կաւ, խաւ, լաւ, ցաւ, նաւ.



կով.

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն:

յ. զ. ո.

մեզ, ձեզ, եզ, խոզ, զոխ, զարդ, պարզ.

ռուս, ռումբ, կեռ, տառ, բառ.

յայտնի, յանկարծ, յատակ, յիսուն, Յիսուս.

լեզու, զազան, զանգակ, ռամիկ, ռեզին.

Յունիսն ու յուլիսը առատ ամիսներ են:

Ամառն ամեն բան առատ է լինում:

Ամառն անտառ, ձմեռը՝ դաշտ:

ա. ե. է. ը. ի. ո. ու. ոյ. այ.

բ. գ. դ. զ. լ. լս. ծ. կ. ձ. մ. յ. ն. շ. պ. ո.

ս. վ. տ. ը. ց. ռ.

Ա. Ե. Է. Ը. Ի. Ո.

Բ. Գ. Դ. Զ. Լ. Լ. Ծ. Կ. Զ. Դ. Մ. Յ. Ն. Ծ. Պ. Ռ.

Ս. Վ. Տ. Բ. Յ. Ի.

Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:

օ. Լ. հ.

օր, օղ, օղ, օձ. տօն, հօր, մօր.

Օգոստոսին հասնում են շատ մրգեր:

Ես այդ ամսին իմ հօր հետ գնում եմ այգի:

Սեպտեմբերը մեզ տալիս է

Խաղողի բոլոր տեսակը:



ձի

Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը — բողկն ու տակը:

Դեկտեմբերին ձինն է գալիս,
Յունևարին ծածկում սար ու ձոր,
Փետրուարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:
իւ. փ. ք.

ձինն, սինն, իւր, իւղ, գիւղ, շիւղ.
փակ, փոս, փառք, քար, քոյր, քեզ, գիրք.

արին, հարիւր, փափուկ, քաղաք.

Զինը դեկտեմբերին է գալիս:
Նոյեմբերին էլ ձինն է գալիս:
Սարերումը ձինն շատ է գալիս:
Յունևարին շատ ցուրտ է լինում:



խոզ



էշ

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալում է չորս շրջանում.
Այս պատճառով չորս ժամանակ
Չորս եղանակ է մեզ բերում:
Թ. չ. ճ. ժ. ջ.

Թաթ, Թութ, չիթ, չէչ, ճաթ, ճութ, ճաղ.

մաճ, ճաշ, ժամ, Թեթ, խեթ, ժախ, ժեռ.

ջանք, ջուխտ, սաջ, քաջ, լանջ, ունջ, մունջ.

Թանաք, ճանաչ, ջաղաց, ժառանգ, չամիչ.

Թիւ, լրիւ, հաշիւ, տիւ, խստիւ.

Ծոյլը պատժի արժանի է:
Ճրագն իր տակին լոյս չի տալ:
Ինչ որ անես, առաջդ կըզայ:
Արած լաւութիւնը չի կորչիլ:



Մեր դասատան աշակերտների
անունները:

եա

Տիգրան Արամեանց.

Արսէնիկ Գուրգէնեանց.

Յարութիւն Յովսէփեանց.

Գրիգոր Միքայէլեանց.

Իանիէլ Իսրայէլեանց.

Յովհաննէս Մարկոսեանց.

Սիմէօն Եսայեանց.

Աշխէն Հայկազունի.

Եղիսաբէթ Արծրունի.

Հայկանուշ Աղայեանց.

Վարսենիկ Շահնազարեանց:

Գրեցէք ձեր և ձեր ընկերների անուն-
ներն ու ազգանունները:



անձայն

Տղայ, երեխայ, ընծայ, հսկայ, արքայ, ճանալայ, օրայ,
տարւայ . . .

(նա) գայ, տայ, լայ, կայ, զնայ, մնայ, աղայ, կարդայ,
իմանայ, մոռանայ, ուշանայ, խնդայ, ուրախանայ,
հիւանդանայ, տկարանայ, հասկանայ, լաւանայ . . .

(Ես) եկայ, իմացայ, մոռացայ, ուշացայ, ստացայ, հաս-
կացայ, ուրախացայ, վեր կացայ, վայր եկայ, կերայ,
կշտացայ . . .

Կիսաձայնաւոր.

հայ, վայ, չայ, փայ, նոյ, հայր, մայր, վայր, ծայր, պայլ,
սայլ, փայլ, այլ, բայց, այծ, լոյս, բոյս, կոյս, ծոյլ,
թոյլ, նշոյլ . . .

Բաղաձայն.

յոյս, յոյն, յարդ, յարգ, յարկ, յիշատակ, յիշել, յան-
կարծ, յարտնի, յատակ . . .

Վերացած.

սա, դա, նա, սրա, դրա, նրա, (դու) ասն, ալն, արն,
կարդն, ինդն, զնն, մնա, (օտար բառեր և յատուկ
անուններ) խաթա, բալա, մաշա, բօշա, ուստա, Յուդա,
Երեմիա, Իտալիա . . .

Զ Ա Յ Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր .

ւ . է . է . ը . ի . ո . ու . օ .
իւ . եւ . եօ .

Բ Ո Ղ Ո Ր Ա Գ Ի Ր

ա . բ . գ . դ . ե . զ . է . ը . թ . ժ . ի . լ . խ .
ծ . կ . հ . ճ . զ . ճ . մ . յ . ն . շ . ո . չ . պ . ջ .
ռ . ս . վ . ա . ը . ց . լ . փ . ք . և . օ . ֆ .

Գ Լ Խ Ա Գ Ի Ր

Ա . Բ . Գ . Դ . Ե . Զ . Է . Ը . Թ . Ժ . Ի . Լ . Խ . Ծ . Կ .
Հ . Գ . Ղ . Ճ . Մ . Յ . Ն . Շ . Ո . Զ . Պ . Զ . Ռ . Ս . Վ .
Տ . Բ . Յ . Ի . Փ . Բ . Օ . Ֆ .

Զ Ե Ռ Ա Գ Ի Ր

ա . բ . գ . դ . ե . զ . է . ը . թ . ժ . ի . լ . խ . ծ . կ . հ . ճ .
դ . ժ . մ . յ . ն . շ . ո . չ . պ . ջ . ռ . ս . վ . ա . ը . ց . լ . փ .
ք . եւ . օ . ֆ .

Ծ Ո Ղ Կ Ա Գ Ի Ր

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ Գ Դ
Ճ Մ Յ Ն Շ Ո Զ Պ Զ Ռ Ս Վ Տ Բ Յ Ի Փ Բ

Շ Ղ Ա Գ Ի Ր

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ճ զ
ճ Մ Յ Ն Շ Ո Զ Պ Զ Ռ Ս Վ Տ Բ Յ Ի Փ Բ
օ ֆ



Թ ա չ ն հ կ ն ե ը

Ա զ ու ն ա կ

Ղ ու զ ու զ ու ,

Ա ՚ զ ու զ ու .

Ն ա կ , ն ա կ ,

Ա - զ ու - ն ա կ ,

Թ ը ո ո ո ...

Կ ա չ ա զ ա կ

Ձ ա չ ա - չ ա ,

Կ ա չ ա - չ ա ,

Ղ ա կ , զ ա կ ,

Կ ա - չ ա - զ ա կ ,


Թ ը ո ո ո ...

Ծ ի տ ի կ

Ծ ի տ եմ , ծ ի տ եմ ,

Ծ ը ը ը ը ը եմ ,

Ճ ի կ , ճ ի կ , ճ ի կ ,



Աստուտում եմ,
 Թռչկոտում եմ,
 Տիկ, տիկ, տիկ.
 Արի, թեիկ,
 Արի, փետրիկ,
 Որ ես դառնամ
 Փորրիկ ծիտիկ.
 Փորրիկ ծիտիկ,
 Պիծիկ, միծիկ,
 Թը՛ռռռ...



Զորս եղանակ:

Մարտը տալիս է ձնծաղիկ,
 Ապրիլը կապոյտ մանուշակ:
 Մայիսին բացում է վարդը,
 Սոխակը երգում անուշակ:
 Յունիսը մեզ խոտ է տալիս,
 Իսկ Յուլիսը առատ ցորեն,
 Օգոստոսը տանձ ու խնձոր,
 Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:
 Սեպտեմբերը մեզ տալիս է
 Խաղողի բոլոր տեսակը,
 Հոկտեմբերը կարմիր գինին,
 Նոյեմբերը բողկն ու ապկը:
 Իեկտեմբերին ձին է գալիս,
 Յունևարին ծածկում սար ու ձոր,
 Փետրևարին սկսում է
 Փոփոխակի ցուրտ ու տաք օր:
 Ահա այսպէս բոլոր տարին
 Թաւալում է չորս շրջանում,
 Այս պատճառով չորս ժամանակ,
 Զորս եղանակ է մեզ բերում:

36213-66




ВРЕМЕНИ
 ИМСТИТУТ
 ДОСТОПОВЕДИИ
 Академии Наук
 СССР

մեծ կոն Գր. Գրքեր
 ՀՀ Երևանի
 ՀՍՄՌ-ԱԲՊ ԵՍՐ
 Ա. ԿՄ Ա ՄԱԳՅԱՐԱՆԻ
 Ա. ՄՅԱՍ ԿԵՐԱՆ ԵՆԳԼՆ

Հ ու ս ա ց աւ

Հուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին,
ծիտն է ծառին, հաւն է թառին: Աշխատա-
ւոր, վեր կաց բանի. ծոյլ աղայի բունը տանի:



Ինչո՞ւ արարր կանգնած է բակում, պինդ-
պինդ կանչում է իր կուկուրիկուն: — Էնդուր
որ վաղուց արևն է ծագել, բայց ծոյլ երե-
խան ընից չի զարթել: Դեռ չի վեր կացել,
աղօթքն արել, դպրոցի դասը դեռ չի առ-
վորել: Կանչում է արարն իր կուկուրիկուն,
սողայոց պարտքը միտներն է ձգում:



Ծեծւած գառնիկ
— Ինչի՞ կուլան դու, գառնիկ.
«Խիտ» ծեծ կերայ ես, մայրիկ:
— Քեզ ո՞վ ծեծեց, ի՞մ գառնիկ.
, Մէկ չար պառաւ, ան, մայրիկ:
— Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ.
, Ծառի տակն էի, մայրիկ:
— Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ.
, Մեծ մահակով, ո՞հ, մայրիկ:
— Ո՞րտեղիդ զարկեց, գառնիկ.
, Ոտիկներիս, ո՞ւհ, մայրիկ:
— Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ.
, Մէ՛... մէ՛... մէ՛... մայրիկ



Ծիտը և բազէն
Ծիտը ծառին ծրվելում է,
Ծիւ, ծիւ, ծիւ:
Բազէն գլխին պտըտում է,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ:

Ծիարը լուեց, ծիարը վախեց՝

Վայ, վայ, վայ:

Բազէ՛, [Թը՛ռռ. բազէ՛, [Թը՛ռռ.

Հայ, հայ, հայ:

Բազէն [Թռաւ,

Բազէն փախաւ,

Ինչ լաւ էլաւ,

Հէ, Տէ, Տէ:

Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,

Պըտպըտուրիկ, չըլպըտուրիկ,

Իու լաւ պրծար չար բազէի

Սուր ճանկերից, հայ, հայ, հայ:



Հարսի հաշիւը

Երկուշաբթի հաց կըթխեն, երեքշաբթի լոշ կըթրջեն, չորեքշաբթի լացք կանեն, հինգշաբթի կար կըկարեն, ուրբաթ

օրը պաս կրկենամ, շաբաթ օրը ժամ կըգնամ, լոյս կիրակի փռանց-փռանց՝ կըզարդարւիմ, կերթամ հօրանց:

Ա ը և

Արև, արև, էկ, էկ,

Զիզի բարին վէր եկ:

Սև-սև ամպեր, հեռացէ՛ք.

Արևին ճամպայ տրէք.

Թողէք դա գայ մե՛զ մօտ.

Իրա լոյսին ենք կարօտ:

Կարմիր արև, էկ, էկ,

Նախշուն բարին վէր եկ:

Արևը յաղթեց ամպերին,

Շողքը ձգեց սարերին.

Զիզի բարը, տե՛ս, տե՛ս,

Պսպղում է ոսկու պէս.

Սիրուն արև, մի՛շտ եկ,

Զիզի բարին վէր եկ:

Հ Ի Ք Ի Ա Թ
I

Զմեռն էր. գիշերը երկար:

Գիւննազ տատը՝ գլուխը քուրսու վրայ
դրած, ննջում էր:

Երեխէքը վրայ թափուեցան, քունը
փախցրին, որ իրենց համար մի հէքիաթ ասի:
Նա էլ սկսեց.

«Էլեւ է չի էլել՝ մի սիրուն արտուտիկ:
Կտուցը սուր՝ մեր Արշակի ըթի նման:
Բմբուլը խուճուճ՝ Տիգրանի մազերի նման:
Թւերը փափիկ Շողիկի կոնների նման:
Ահա այսպէ՛ս սիրուն էր արտուտիկը:

— Բա ինձ նման ոչինչ չունէ՞ր, ասեց
Վանին:

— Բա ի՞նձ, ձայն տրւաւ Հռիփսիկը:

— Ինձ էլ չասեցիր, տա՛տի, լաց էլաւ
Նազիկը:

— Սպասեցէք, սպասեցէ՛ք, երեխէք, դեռ
չեմ վերջացրել. ամենքիդ էլ բաժին կըտամ,
ասեց տատը և շարունակեց.

«Աչիկներն այնպէս նախշուն էին, ինչ-
պէս Վանիի աչքերը:» —

Կատարն այնպէս կտրմիր էր, ինչպէս
Հռիփսիկի թշերը: Յամուց շոք ցրկրամ
ամ Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս
Նազիկի մատները:

— Ես ոտները չեմ ուզում, ասեց Նա՛ն
զիկը:

— Լա՛ւ, ոտներ չեմ ասիլ. տոտիկները
կուզե՛ս.

— Զե՛մ ուզում, ես տոտիկներն էլ չեմ
ուզում:

— Բա ի՞նչը կուզես, Նազիկ:

— Ես աչիկներն եմ ուզում:

— Աչիկներն ինձ է տրուել տատը, թեզ
չեմ տալ, գոչեց Վանին:

— Նազիկ, կուզե՛ս կատարը: Գժու վեր
աս, տոտիկները ես կըվերցնեմ, ասեց Հռիփ-
սիկը:

— Զե՛մ ուզում, ես աչիկներն եմ ուզում:

— Վանի, աղու կատարը վերցրու՛մ ես
տոտիկները, իսկ Նազիկը՝ աչիկները:
Ի՞նչ եմ անում կատարը. տատը ում

ինչ որ տըւել է այն է, նրանք:
— Ճշմարիտ է ասում Վանին, Բամեն
կողմից գոչեցին երեխէքը:

Նազիկը գո՛Տ չըմնաց, և վէճը երկար
շարունակւեց: Բայց տատը չէր լսում. նա
գլուխը դրել էր բարձին և քնել: Էլ չէին
կարող զարթեցնել: Վեր կացան, իրանք էլ
մտան տեղերը:

2.

Միւս երեկոյին երեխէքը էլի հաւարւե-
ցան տատի մօտ, որ շարունակի Տէքիաթը:
Նա էլ սկսեց.

„Անցած գարնանը մեր պարտիզի ծա-
ռի վրայ մի սիրուն կրկու կար: Ես նստած
էի ծառի տակին, և դուք մէկ-մէկ եկաք
ինձ մօտ:

Երբ որ Արշակը ներս մտաւ, կրկուն
կանչեց՝ կո՛ւ—կո՛ւ:

Եկաւ Շողիկը, ասեց՝ պո՛ւ—պո՛ւ:

Եկաւ Տիգրանը, ասեց՝ տո՛ւ—տո՛ւ:

Եկաւ Վանին, ասեց՝ գո՛ւ—գո՛ւ:

Եկաւ Հոփսիկը, ասեց՝ բո՛ւ—բո՛ւ:

Եկաւ Նազիկը, կրկուն էլ ոչինչ չասեց,
թուաւ գնաց...

— Օ՛խ, օ՛խ, Նազի՛կ, օ՛խ, օ՛խ, կրկուն
քեզ համար ոչինչ չի ասել, — միաբերան
ձայն տըւին երեխէքը:

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչո՞ւ կը-
կուն իր համար ոչինչ չի ասել, և սկսեց
լաց լինիլ: Տատը նրան ասեց.

— Նազիկ, գիտե՛ս ի՞նչու կրկուն քեզ
համար բան չասեց. նա վախեցաւ քեզ բան
ասել: Ի՛նչ որ տսէր, դու չըպիտի հաւա-
նէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր փախու,
ինչպէս անցած երեկոյին:

— Տատի ջան, տատի, որ մէկ էլ կը-
կուն գայ, ասա ինձ համար էլ մէկ բան
ասի, աղաչեց Նազիկը, և նրանից յետոյ
շատ խելօքացաւ:



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

1.
Անտառի խորքում մի ճօճ կար կապած
և նրա մէջը մի մանուկ դրած:

Հաց էր լինում մանուկը:

Մայր չըկար մօտը, որ ծիծ տար, հայր
չըկար՝ որ պահպանէր:

Անտառումը մարդ չըկար:

Մի գթօտ պախրակով կաթնալից կրթ-
քով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի ճեռ և
տխուր ձայնով երեխին ասեց.

Սիրուն երեխայ, որք ես մնացել,

Քո անբախտ մօրը գերի են տարել:

Մնա գնաց, կորաւ, էլ յետ չի գալու:

Էլ ոչ մի անգամ թեզ ծիծ չի տալու:

Նա թեզ փաթաթեց լայն տերևներով,

ճօճի մէջ կապեց ճանիկ տակով:

Նա լաց էր լինում աղի արցունքով,

Իր վերջին նանիկն ասում էր լալով.

„Նանա, բալիկս, նանա,

Մեծատերև թաթաշոր,

Մանրատերև ոտաշոր.

Քամին կանի, ժած կըտայ,

Պախրէն կըգայ, ծիծ կըտայ,

Նանա, գառնուկս, նանա:

Ահա եկել եմ, որ թեզ ծիծ տամ ես,

Պահեմ, պահպանեմ իմ հորթուկս պէս:

2.

Պախրան ծիծ տըլաւ երեխին:

Երեխան կշտացաւ ու բնեց: Պախրան
իր հորթը թողեց երեխի մօտ, իսկ ինքը
գնաց արածելու, որ կաթը շատացնի և
գայ երկուսին էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան
և նանիկ ասեց.

Նանա, մանկիկս, նանա.

Իմ մայրը քո մօր նման չի,

Ամեն խոտից կծիլ չի,

Ամեն ջրից խմիլ չի,

Ամեն տափի նստիլ չի:

Նա սարէսար ման կըգայ,

Որք կըգտնի ծիծ կըտայ.

Նանա, մանկիկս, նանա:

3.

Պախրան կուրծը լիքը յետ դարձաւ
արօտատեղից և ծիծ տըլաւ երեխին էլ
հորթին էլ:

Ով որ տարով կրմեծանայ, մեր երեխան օրով մեծացաւ: Շատ չանցաւ, նա դուրս եկաւ ճօճիցը: մի օր չորեքթաթ տըլաւ, միւս օրը ոտքի կանգնեց: Մի քանի անգամ սկըճաց, վէր ընկաւ, բայց շուտով ամրացաւ և սկսեց պախրի ճետեից վազվզել:

4.

Մի թագաւորի որդի չէր լինում: Երագումն ասացին. «Թագաւոր, Աստուած բեզ մի որդի պիտի տայ անտառի խորքումը»:

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որսի գնաց իր որսորդների ճետ:

Շատ ման եկան, ոչինչ չըզտան, ոչ մի որս չըպատահեց նրանց:

Բայց որ հասան անտառի խորքը, այնտեղ մի պախրի ճետը գտան և նրա մօտ երեխի ոտնատեղեր:


Ամենքը մնացին զարմացած և չէին հաւատում, որ երեխի կըլինի ոտնատեղերը. բայց թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի ճետքը բշեն, և ուր որ լինի, գտնեն նրան:

Որսորդները գնացին, և երկու ժամ չանցած՝ մի սիրուն տղայ բերին թագաւորի

մօտ և պատմեցին, թէ ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ: Երեխին գրկեց, համբուրեց և անունը դրաւ Պախշատուր:

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պալատումը, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ թագաւոր և մեծ զօրքով գնաց, իր մօրն ազատեց գերութիւնից:



Որբի պահողն Աստուած է:

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
 Լուսինն էլ վաղուց գնաց, թաք կացաւ:
 Գիշերայ մութը աշխարհս պատեց
 Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշուց, իր տունը մտաւ.
 Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ.
 Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,
 Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
 Ոտքերը բոբիկ, տկար ու քաղցած,
 Մի տան պատի տակ մնաց կուշ եկած:
 Բարի տան-տէրը վերևից նայեց,
 Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.
 Եւ այնուհետև տարաբախտ տղան
 Ունէր իր համար տէր ու տիրական:



Ա ն ճ ր և

Անձրև, անձրև, ցած արի.

Բըսցուր ցորեն ու գարի.

Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ:

Աւել փոշի, մաքրէ օդ:

Անձրև, անձրև, ցած արի,

Գարդ ամենուր բարի:

Ճ օ լ ի (արևաբեր).

Ճօլի, Ճօլի, Ճօլ չըկայ,

Խաւիժ անեմ, եղ չըկայ,

Ճօլին ընկել է ծովը,

Ծովիցը հանող չըկայ:

Չըւան բերէք, դուրս հանենք,

Թող բերէք, կցան անենք,

Չու բերէք, Թաթին դնենք,

Եղ բերէք, վարսը քսենք:

Խօփը պատումն է ժանգոտել,

Չևիչը տափումն է ժանգոտել:

Կանաչ դաշտերին ենք կարօտ,

Կարմիր արևին ենք կարօտ:

Ն ու ը ի (անձրևաբեր)

Նուրին Նուրին եկել է,

Աջբա Հուրին եկել է,

Շիւա շապիկ հագել է,

Կարմիր գօտիկ փապել է.

Եղ բերէք, վարսը քսենք,

Չուր բերէք, գլխին ածենք.

Մեր Նուրինի փայլ տուէք,

Ուտենք, խմենք, քեփ անենք:

(դձգաւզա) զ յօժ
Ծննդեան երգ

Սլէլուիան, ալէլուիան,
Զրօրհնէքը ճրագլուսով,
Զատիկը՝ արեւլուսով,
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լաւ լեցէք:

Մարիամ եկաւ լալով լալով, բժ
Լալով լալով, մղկըտալով. ցփօժ
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց:

Զեր տունն է չորեքսիւնի,
Զորս սիւներից ո՞րն է սալի.
Սալը չարակամի սրտին,
Սպրի բարեկամի որդին:
Տունըչէ՛ն, տունըչէ՛ն.
Զեր տղայոց անունն ի՛նչ է:
— Լայկ ու Սրամ է:
Իրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն Նախջրւանի,

Զեր [Թշնամուն գետը տանի,
Գայլագոռաւը աչքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ եղ
Տըւէ՛ք՝ ալէլուիան տանի:



Ուտելիք և խմելիք.

Մարդը ուտում է, խմում է, կրծում է,
ծծում է, խրպըշտում է, կուլ է տալիս,
լամլամում է: Գինին խմում են, իսկ քացա-
խը ուտում են իրան գլխու կամ կերակու-
րի մէջ: Կաթը բրթում ուտում են իրան
գլխու և թէյի հետ խմում են: Երեխան
ծծում է մօր կաթը: Մաաջուրը, խաշուն,
չորւան, թանէսպասը, փթրուկը, մախոխը
ուտում են և խրպըշտում են: Միսն ու-

տում են, իսկ ոսկորը կրծում: Դեղը խմում են, եթէ ջրի է, իսկ դեղահատերը կուլ են սալիս: Պինդ կերակուրներն ուտելիս՝ ծամում են, բայց ատամ չունեցողները լամլամում են: Մաստակը ծամում են որոճող ուղտի նման: Շունը լակում է, լափում է:

Քղալ-փոխ.

Ամառն էր: Հունձն ընկել էր: Մէկ լոռեցի և մէկ աշտարակցի միասին հունձ էին անում: Ճաշի ժամանակ նրանց համար մածուն բերին մի մեծ մաթրաթով, բայց երկու գղալի տեղ մէկն էին բերել: Երբոր մածնի բրթուճը պատրաստեցին, աշտարակցին ասեց.

— Գղալը մէկ հատ է. արի՛ գղալ-փոխ անենք, գղալ-փոխ ուտենք:

Լոռեցին չըհամաձայնեց, ասեց.

— Թո՛ղ ես գղալով ուտեմ, դու ձեռով կեր:

— Ո՛չ, պատասխանեց աշտարակցին: Որովհետև գղալ-փոխ չես ուզում, արի՛ մէկ բան ասեմ, այնպէս անենք: Ով որ մեզանից եօթը գիւղի անուն տայ վրայ-վրայ, շուտ-շուտ, գղալով նա ուտի:

— Լա՛ւ. առաջ ես կասեմ, ասեց լոռեցին ու սկսեց.

— Հլէ՛, Լօ՛...ութի. հլէ՛, Ու...զո՛ւն...լար... Լօռեցին միայն երկու գիւղի անուն տրւաւ, այն էլ չկարողացաւ շուտ-շուտ ասել ու սուս կացաւ: Յետոյ աշտարակցին սկսեց, և կարկտի պէս վրայ տրւաւ.

Ուշի՛—Ուշական

Փարպի - Բիւրական

Թալին—Թալիշ—Մաստարա,

Գղալի պոչը դէսն արա՛:

Ասեց ու գղալն առաւ լոռեցու ձեռքիցը: Լոռեցու բերանը մնաց բաց. բայց էլ ի՛նչ կարող էր անել. խաղը տանուլ էր տրւել...



Շուտասերուկներ

1. Ուսուցիչն ուսուցչին ասեց սնուցիչ
Սնուցիչը սնուցչին ասեց ուսուցիչ:
2. Ծովի ճուտը ճմբան ծերին ճխոր ծուռ:
3. Ակնակար Ակոր ասէր, դու ինձ համար
մի ջուխտ ակը կապի, ես քեզ ասեմ՝ քեզ
արքայութիւն ակնակապ Ակոր ասէր:



Խելօք գլուխը.

Բերանն ասեց. ես ամեն ինչ կուտեմ,
կըխմեմ:

Գլուխն ասեց. հը՛մ:

Զեռքն ասեց. ես ամեն ինչ կըշինեմ,
կըքանդեմ:

Գլուխն ասեց. հը՛մ:

Լեզուն ասեց. ես ինչ ուզեմ՝ կասեմ,
կըստամեմ:

Գլուխն ասեց. հը՛մ:



Ոտքն ասեց. ես ամեն տեղ կերթամ,
ման կըգամ:

Գլուխն ասեց. հը՛մ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը
ասացին գլխին.

Ինչո՞ւ ես ,,հը՛մ" անում:

Գլուխը պատասխանեց.

— Ինչ անէք չանէք, առաջ ինձ պիտի
հարցնէք:

Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կըմ-
կըմալով ասեց.

— Հա... ըզըզորդ, ըզըզորդ է ասում
զըզըզըլուխը...:

Ոտքով ման եմ գալիս,

Զեռքով աշխատում,

Սչքով տեսնում եմ,

Ականջով լսում:

Իսկ իմ չարն ու բարին,

Իմ լան ու վատը

Ո՛վ է իմանում:

Խելօք գլուխս:

Հինգ զգայարանք.

Ես աչքով տեսնում եմ,

Ականջով լսում,

Քիթով հոտ եմ առնում,

Լեզուով ճաշակում.

Իսկ ցուրտն ու տաքը,

Կոշտն ու կակուղը

Ինչո՞վ եմ զգում.

— Բոլոր մարմնովս եմ շօշափում:

—

Արհեստ ընտրող մանուկը:

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր. ոչ գիր էր սովորում և ոչ մի արհեստ:

— Ի՞նչ արհեստ սովորեմ, — փնթփրնթում էր նա. — կլեկուծիւնը շատ լաւ արհեստ է, բայց բոքիկ ոտքով ամանում կանգնել, արագ պտրտել, դա այնքան հեշտ չէ: Աւելի հեշտ է փուլքսի փչելը, բայց այդ իմ ձեռքում երկար չեն թողնիլ: Վարպետ էլ դառնամ, ի՞նչ եմ անելու. պէտք է մատներով փոքր ինչ բամբակով տաք-տաք

պղնձին նաշաղիր քսեմ, ձեռքերս այրեմ: Չէ, այդ իմ բան չէ:


— Իարբնի մօտ կերթամ. այնտեղ էլ փուլքս կայ, ձմեռն էլ տաք է. բայց մեծ ուժ պէտք է այդ գործի համար: Ահագին մուրձով երկաթը ծեծել, որ նա տափակի, — ես այդ չեմ անիլ, ի՞նչ կուզի լինի:

— Նալբանդը լաւ է: Մեխի ծայր սրել և պայտեր շտկել, այդ շատ դժուար չէ. բայց մէկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը դնել — երկիւղալի է. ձիու աքացին իմ ընկերների ապտակից թունդ է: Չէ, իմ կարծիքով դա լաւ արհեստ չէ:

Իերձակուծիւնը մաքուր արհեստ է. լաւ միտս ընկաւ: Բայց ի՞նչ եմ ասում. ամբողջ օրերով ծալպատակ նստել, գլուխ բաշ գցած կարել ու կարել, ոչ խաղալ կըլինի և ոչ վազվրզել: Չէ, դա էլ բան չէ:

— Ինչո՞ւ չբզնամ որմնագիր դառնամ, բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այնտեղից կանչեմ. — «բար ու կիր տըւէք, աղիւս ձգեցէք»: Այսպէս կըգոռամ և կըհրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես

վարպետ եմ, գործս լաւ գիտեմ: Բայց վայ թէ յանկարծ այդ բարձր տեղիցս ոտքս սկընջի և թրմփալով ներքև գլորւիմ: Չէ, այդ Տեղա գործ չէ և ոչ իմ բանն է: — Երևի չկայ այնպիսի արհեստ, որ ես հաւանեմ, գնամ սովորեմ: Թէ հիւանդառնամ, ոտքս կըկտրեմ: Կօշկակար դառնամ, ձեռքս կըծակեմ. ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ. թէ բրուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ. վարժարան գնամ, գիր պիտի սովորեմ: Չէ, իմ կարծիքով, ամենից լաւ է՝ ոչինչ չըշինեմ, ոչինչ չըսովրեմ: Բայց այնուհետև ես ի՞նչ կըդառնամ:



Ծոյլ աղջիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,
 Բամբակը կորիզոտ է.
 Մետաքս պիտի որ մանեմ,
 Մաստակ պիտի որ ծամեմ,
 Կտերը տիտիկ անեմ,
 Անցնողին մտիկ անեմ.
 Ուտե՛մ, խմե՛մ,
 Մթնի՛, քնե՛մ:

Առածներ

Իմացողին մին, չիմացողին հազար ու մին:— Իմացողին մէ՛կ ասա, չիմացողին հա կանց, հա ասա:— Սեին սապոնն ինչ անի, խեին խրատն ինչ անի:— Ով որ երգի ամառը, նա պար կըգայ ձմեռը:— Մի բաժակ ջուր, ով ուզի՝ տուր:— Էսօրւայ փուշը էգուցւայնուշը:— Հացն ուտելով, բանն անելով: Ապրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է: Զուի գողը ձիու գող կըդառնայ: Տաշած քարը գետնին չի մնալ: Ծերանաս, ծերի պատին իմանաս: Կուշտը քաղցածին մանր կըբրթի:

Ուլերն ու գայլը

Լինում է, չի լինում մի այժ: Այս այժն անտառումն իրան համար տուն է շինում և իր փոքրիկ ուլերի հետ բնակում է նրա մէջ: Ամեն առաւօտ այժը դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՛րդիք, դռները փակեցէք, հանգիստ կացէք և եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»: Ասում է ու գնում: Գաշտումը լաւ արածելուց, կուրծք կաթնով լցնելուց յետոյ՝ այժը տուն է գալիս: Տան դռները փակ են: Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում:

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. նա մտրումը դնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այնտեղ չլինի: Մի օր, երբ այժը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթով դռանը խփում է ու կանչում:

Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը մի լաւ ականջ են դնում. նրանք հասկանում են, որ դուռը թըխ-թըխկացնողն իրանց մայրը

չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիք, հեռացիր այդտեղից. մեր մայրը բարակ ձայնով ու ջաղցրը է մկրկում, դուռն էլ պոզերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց չեն անում: Գայլը թողում հեռանում է: Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը: Նա գովում է ուլերին, որ դուռը բաց չեն արել. — «Դուք շատ լաւ էք արել, որ դուռը բաց չէք արել. թէ չէ՝ նա ձեզ ամենքիդ էլ կուտէր»:

Պառաւն ու այծը

Կար չըկար երբեմն
Մի աղքատ պառւիկ,
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ,
Չալիկ մալիկ,
Կաթնատու այծիկ:

Պառաւը ձըմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նըրա հետ կիսեց.

Սիրով — յօժար
Նըրա հետ կիսեց:
Երբ ձիւնը հալեցաւ,
Բըսաւ կանաչ խոտ,
Պառաւն իր այծիկը
Դուրս տարաւ արօտ.

Ուրախ - զըւարթ
Դուրս տարաւ արօտ:

Պանիր մառախուղը դեռինը պատեց, սխառայս յ ի
 թաց Պառախառչեից այծը կորցրեց. ըրիմարա պիբառն
 ԵտուՍ անտճԱփսոս, ափսոս, մուտը մարդիկն ի զցը
 առնճ հարոսիՍյծը կորցրեց: ամէ ըսգ ցուտը յո մն
 ած ցցրան ի սկաբ Խոսի ըրիխամանաե գգոՓ անճ Ետու
 ցուՓ Պառաւը լաց էլաւ, իսկ գայլը օճնաց, յո ի Ետու
 յոյսՍ ոլըւած այծիկը բարձր մըկըկաց, յոս ցճ Խոս Խոս
 Սըկըկ, մըկըկ, ըրիգմնա քոճ ամ իջ իջ
 Սյծը մըկըկաց:

Գայլն իսկոյն մօտեցաւ, այծին շղակեց.
 Պառաւը ետեից բարձրաձայն գոչեց.
 «Հայ-հայ, վայ-վայ», ցաՓ
 Բարձրաձայն գոչեց:

Խեղճը մնաց կանգնած մի փունջ փոտ ձեռին,
 Անմխիթար ձայնով կանչելով այծին.
 «Ե՛կ, է՛կ, է՛կ—է՛կ»,
 Կանչելով այծին: ցառաՓ
 ըմճար ցլիճՍ
 ցառապս վնդեց զ՛
 քմսկի ամճ աղց՛Փ



Ըտխարակ սխառայս
 մաց մմա ի յմոզցաՓ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սպիտակ մալանչներ,
 Մանիր թեյեր հաստ ու բարակ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:

Ձէթ եմ ամել ականջներըդ,
 Նոր շինել եմ շրտուիկ,
 Դէ՛հ, շուտ շարժիր լայն թւերըդ,
 Ոստեր շինիր սրբուլիկ:


Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Լիսեռնիկդ պտրտիր, զճիճ զճիճ
 Մանիր թեյեր հաստ ու բարակ, զՈ
 Իլկիդ վրայ փաթաթիր:

Տիգրանիկս գուլբա չունի,
 Հանդ է գնում ոտաբաց.
 Գաբրիէլս չուխա չունի,
 Միշտ անում է սուգ ու լաց:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր թեյեր հաստ ու բարակ,
 Մանիր սպիտակ փաթիլներ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:

Ջրալ չունինք, չաթու չունինք,
 Ոչ սամոտէն, ոչ պարան,

Սյսպէս աղքատ զեռեղած չենք,
 Կտրուել է ամեն բան:
 Դեռ հարս էի, որ գործեցի,
 Քանի կարպետ, խալիչա,
 Բայց դրանցից շուտ զրկեցի,
 Հիմա չունիմ մի բէչա:
 Կարմիր օրս երբ սևացաւ,
 Եւ պարտք մնաց թէև բիչ,
 Պարտատիրոջ սիրտն էլ սևցաւ,
 Եկաւ տարաւ ամեն ինչ:
 Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սպիտակ քուլաներ,
 Մանիր թելեր հաստ ու բարակ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:



Հանելուկ.
 Օհանն ու Վանին հանելուկներ էին
 ասում: Ինչ որ մէկն ասում էր, միւսը
 գտնում էր: Վերջը Օհանն ասեց.

—Սյն ի՞նչ է. ,,Տակը քար է, քար չէ.
 զլուխը քար է, քար չէ. խոտ կուտի, կով
 չէ. ձու կածի, հաւ չէ“:

Վանին շատ մտածեց, շատ բանի ա-
 նուն տրւաւ, չեղաւ, չըզտաւ: Յետոյ ասեց.
 չեմ գտնում, ասա՛ տեսնեմ ի՞նչն է:

—Դէ մի քաղաք տուր, ասեմ:

—Երևանը բեզ:

—Ձեմ ուզում երևանը:

—Շուշին բեզ.

—Շուշին էլ չեմ ուզում:

—Ալէքսանդրապօլ, Նուխի, Բաքու,
 Նախիջևան:

—Ձեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում:
 Բա ո՞րը կուզես, Օհան:

—Թիֆլիզը:

Է՛հ, բեզ լինի, դէ ասա՛:

—Դեռ ականջ դիր: Ուտեմ խմեմ Թիֆ-
 լիզ, հազնեմ մաշեմ Թիֆլիզ: Ես մի քահ-

լան ճիու վրայ նստեմ, դու մի լղար ջո-
րու վրայ: Ես ուտեմ մածոնն ու կաթ, դու
ուտես բորբենած ճաթ:

— Բաւական է, դէ ասա:

— Ասեմ. այն է, որ վրան կանգնում
ենք ու ասում. ,, Կորա, կորա, պապոնց տուն.
կորա, կորա, պապոնց տուն:“:

— Հա՛, իմացայ, կրիան է:

Հիմա դուք ասացէք, ինչ հանելուկներ գիտէք:



Բ ա ո ա ի ա ղ

Պօղոսն ու Պետրոսը բառախաղի էին տալին:

Պօղոսը վարժեա՞ծ էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում:

Ահա թէ ինչպէս էին խաղում:

Պօղոս. Պետրոս, ասա՛ — տունը:

Պետրոս. Տունը:

Պօղոս. Բեզ կծի շունը:

Պօղոս. Ասա՛ — Դուռը:

Պետրոս. Դուռը:

Պօղոս. Ընկնիս ջուրը:

Պօղոս. Ասա՛ — պահ: Գրեցայ որ թ մարտաց Դ՞՞:

Պետրոս. Պաս:

Պօղոս. Ուտես թանկ սպաս:

Պետրոս. Էլ չեմ ասում. հիմա ես կը հարցնեմ քեզ:

Պօղոս. Լա՛ — հարցրու:

Պետրոս. Ասա՛ — ծիտ:

Պօղոս. Ծիտ:

Պետրոս. Ուտես մախոխ:

Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս: Ես ասում եմ ծիտ, դու

ասում ես մախոխ. այդ քնչպէս կարելի է տեսնում

ես: նման չեն: Դեռ սպասիր, էլի ես կը հարցնեմ

— Ասա՛ — ծիտէ:

Պետրոս. Ծիտ է:

Պօղոս. Պետրոսն անմիտ է:

Պետրոս. Ե՛հ, էլ չեմ ասիլ. ես անմիտ չեմ:

Պօղոս. Լաւ, շարունակենք, էլ այդպէս չեմ ասիլ:

Ասա՛ — հաւ է:

Պետրոս. Հաւ է: *բ ա մ ր ա ս ա ղ*
 Պողոս. Պետրոսը լաւ է:
 Պողոս. Ասա՛—սանձ: *յ ա մ ր ա ս ա ղ*
 Պետրոս. Սանձ: *յ ա մ ր ա ս ա ղ*
 Պողոս. Պետրոսն ուտի տանձ: *յ ա մ ր ա ս ա ղ*
 Պետրոս. Հիմա ես կըհարցնեմ: Ասա՛—սամի: *յ ա մ ր ա ս ա ղ*
 Պողոս. Սամի:
 Պետրոս. Շաքարը ծամի:
 Պետրոս. Սաս—հաց:
 Պողոս. Հաց:
 Պետրոս. Մի քիչ կաց:
 Պողոս. Է՛հ բաւական է, դու լաւերը չես իմանում:

Ծառերի գանգատը:

Մեր տըւած փայտից կրակ են, անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում. այլ անգուլթ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարաքներ, ժամեր ու վանքեր, մեր տախտակներից յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան և այլ շատ տեսակ կահ ու կարա-

սիք: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգուլթ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ գետերով անցնում. սայլեր են շինում՝ ամեն ինչ կրում. գուլթան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում. քանոն են շինում՝ տետրակներ տողում. նաւեր են շինում՝ ծովի մէջ լողում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգուլթ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խընձոր. նուռ ու սերկելի, կեռաս ու սալոր. զեղձ կարմրաթուշիկ, ծիրան անուշիկ: Հապա խաղողը... և քանի տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ. և այդ ամենը մարդիկն են ուտում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում:

Ի՞նչօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ խնայեցէք, մեզ պահպանեցէք և ձեր

հանդերում, ձեր պարտեզներում ծառեր
սնկեցէք:

Ուսումնարան.

Դաշտը սիրուն է դալար բոյսերով
Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղիկներով:
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:
Սիրուն է ծառը կանաչ ճղներով,
Փունջ-փունջ կախուած իր պտուղներով:
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր առաքինի, խելօք սաներով:
Աստուած, պահպանիր դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով:
Եւ մենք նորանում զուգիւք, զարդարինք
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

Ծիծեռնակ.

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի
հանգստանում, այլ միշտ թռչելով, դէս դէն
ընկնելով նիւթ է հաւաքում:

Նիւթ է հաւաքում—խոտ ու կաւ կրում,
Իր բունը շինում, բմբուլով լցնում,
Փափկացնում ու մէջը մտնում:

Մտնում է մէջը երեք ձու ածում և
երեք շաբաթ վրան թուխս նստում, ճա-
զուկներ հանում:

Փափիկ ճագերը դուրս եկան թէ չէ,
մայրը թռչում է, դէս ու դէն ընկնում,
մեծեղներ բերում, նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում,
սիրուն ճագերը թեւաւորում են, բնից դուրս
թռչում և իրանց մօր հետ ճանապարհ
ընկնում,— լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձո-
րերի, մութ անտառների, բարձր սարերի,
կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու
տեղ գնում:

Զմեռն անցնում է, գարունը մտնում:
մեր ծիծեռնակն էլի գալիս է, իր բունը
գտնում, ճչում, ծրլւրլում, քանդածը շրտ-
կում, կարկատում, շինում, նոր ձւեր ա-
ծում, նոր ճագեր հանում, պահում, մեծա-
ցնում, աշնան ժամանակ, առաջւայ նման,
ճանապարհ ընկնում,— լայն-լայն դաշտերի
խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր
սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում,
հեռու տեղ գնում:

Երգ պանդխտի.

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ,
 Դէպի ուր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ.
 Ա՛խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ.
 Անդ շինիր քո բունը — հայրենի կտուրի տակ:
 Անդ հեռու ալեւոր հայր ունիմ սգաւոր,
 Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:
 Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարև արա,
 Ասա՛ թող նստի լայ իւր անբախտ որդու վրայ:
 Դու պատմիր, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
 Միշտ լալով, ողբալով, կեանքս մաշել եղել կէս:
 Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը:
 Գիշերը թաց աչքիս բունը մօտ չի գալիս:
 Շուտով սառ հողի տակ կը սպարկեմ այստեղ մենակ,
 Թողնելով հօրս սրտում միշտ ցաւալի յիշատակ:
 Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, զնա արագ
 Դէպի Հայոց աշխարհը, ծնած տեղս — Աշտարակ:



Մեղուն և Մարդը:

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր տիրոջը:

— Ի՞նչ կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը:

— Գիտեմ, դու երևի կարծում ես, թէ ամենից օգտակարը դու ես, բայց սխալուում ես, պատասխանեց տէրը:

— Ի՞նչպէս, տէր. ո՞րն է այն կենդանին, որ ինձանից աւելի օգտակար է:

— Ոչխարը:

— Սյդ հաշիւ չէ, տէր. ոչխարը իմ հասակակիցս չէ: Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

Շատ բարի: Շերամը բեզ պէս փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

— Շերամը ո՞րն է:

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար աննման բնքուշ մետաքս է շինում:

Հն, իմացայ: Այդ այն շատակեր ճի-
ճուն չէ, որ անդադար կերակրում էք թը-
թան տերևով:

— Նա ինքն է:

— Բայց գիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ
էլ կերակրէք, մենք մեղրի տեղ ոսկի կը-
շինենք ձեզ համար: Ի՞նչ ոչ մի կենդանի
չունիք, որ իր կերակուրը մեզ նման ինքը
լինի շինելիս և ուրիշին էլ բաժին լինի
տալիս: Այնպէս չէ, պարոնս:

— Այո, այդ կողմանէ դու ուղիղ ես.
մենք դէպի ձեզ շատ ապերախտ ենք, որով-
հետև բոլորովին անխնամ ենք թողնում
ձեզ . . .

Մեղուն ուրախացաւ տիրոջ պատաս-
խանիցը և թռաւ նստեց վարդենու վրայ:



Մեղուն:

Հն ծագեցաւ արեգակը,
Հն ծաղկեցաւ մանուշակը.
Մեղուն թողեց իր փեթակը
Տըզտըզալով, տըզտըզալով:
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղկի,
Մեղըր առաւ քաղցը անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,
Պըզպըզալով, պըզպըզալով:
Անուշ մեղըր մանր տըղոց,
Իեղին մոմը՝ ամեն սըբոց,
Իսկ չարերին կրճ ու խայթոց,
Կըսկըծալով, կըսկըծալով:

Կենդանիների վեճը.

Եզը, Կովը և Շունը վիճում էին մի-
մեանց հետ և ամեն միւր պնդում էր, թէ
մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում:

— Ի հարկէ, նա ինձ ամենքիցը շատ է
սիրում, ասում է Եզը և գիտե՞ք ինչու հա-
մար: Նրա համար, որ ես եմ նրա արօրն

ու տափանը քաշում, Ես եմ նրա համար
անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում
սայլումը և իր ցորենը տանում ջաղաց,
այդտեղ ալիւր շինում. յետոյ էլի ես եմ
տանում քաղաք, ուր նա ծախում է այդ
ալիւրը և իր տան համար առուտուր ա-
նում, երեխանց համար հագնելիք առնում:
Ուրեմն, դուք ի՞նչ էք կարծում, ես որ չը-
լինէի, նա ի՞նչպէս կարող էր ապրել:

— Այդ ճշմարիտ ես ասում, ասաց կովը:
Բայց մեր տէրն ինձ ամենքիցդ աւելի որ
սիրում է, այդ նրա համար է, որ նա իմա-
նում է, թէ քեզ նման աշխատասէր ու ժրա-
ջան Եզնուկին ես եմ պաշել մեծացրել:

Այս մէկ: Մէկ էլ որ նրա բոլոր գեր-
դաստանն իմ կաթովս եմ պահում: Այն
մաճուճն ու կարագը, այն սերն ու կաթը,
այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թա-
նէսպասը, որ ամեն օր խրպչտում են, ո՞ւմ
տուածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես
չըլինիմ, բոլորը քաղցած կըկոտորւին:

— Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն
կովիկ, սկսեց Շունը: Ո՞վ կարող է ուրա-

նալ բո լաւութիւնը: Եստ անգամ ես ինքս
էլ եմ մասնակից լինում բո տուած անուշ
թանին: Մեր տանտիկինն ամեն ինոցի հա-
րելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով
որ բո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով
կուրանայ: Ես շատ երախտագէտ եմ, ոչ
ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ: Բայց
գիտէ՞ք ինչ կայ: Դուք մի՛ նեղանաք, որ մեր
տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում:
Դրա համար մեծ պատճառ կայ և ահա ա-
սեմ, թէ ի՞նչ է դրա պատճառը:

Եւ Շունն սկսեց մէկ-մէկ հաշուել թէ
ինքն ինչ ու ինչ է անում:

Ասած է՝ շունը որ հաշել սկսի, էլ չի
դադարիլ: Այնքան հաշեց եզան ու կովի
ճետ, որ տէրն իմացաւ, գնաց նորանց մօտ,
շան լեզուիցն ազատեց, ասելով. «Թող տուր
դրանց, Բողա՛ր, դու չըգիտես, որ ամենքդ
էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միւսի ա-
րածը չէք կարող անել. այդ պատճառով ես
ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սի-
րեցէք միմեանց:

Կորած Հորթը.

Ձին է գալիս փաթիլ-փաթիլ,
Հէտն էլ անձրև կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տուարիցը,
Կուրծք ու ծծեր կաթնով լիբը.
,,Հորթուկա ուր է՞ նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացանցրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լուեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,
Պառաւը գնաց տրնքալընքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տուղեց,
Տանտիկնոջը բան չըթողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:



Մեղուն և Աղաւնին

I. Փորձանք.

Ժրաջան Մեղուն ծաղկալից դաշտում
Եր մեղրի համար նիւթ էր հաւաքում: Ա-
րևի տակին շատ աշխատելով, Մեղուն շատ
յողնեց և խիստ ծարաւեց:
Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար:
Մօտեցաւ լճին, վեր եկաւ ափին, որ քիչ

ջուր խմի, ծարաւը կտորի, նոր ուժ նտանայ, թուչի տուն գնայ: Հէնց որ կուացաւ, որ ջուր կուճանի, յանկարծ գլորեց, ընկաւ ջրի մէջ: Նա շատ աշխատեց, որ Սցամաք դուրս գայ, բայց մի փոքր ալիք նրան ներս բաշեց, ափից հեռացրեց:

Սյսպէս խեղճ մեղուն ցամաքից զրրկեց, ջրի երեսին թւերը փռեց և յոյսը կտրած՝ մնաց մեկնւած:



2. Օգնութիւն.

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղանի: Բարի Աղանին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր խեղճ Մեղուն՝ յուսահատ փռւած ջրի երեսին: Իսկոյն շտապեց, մի տերև կտրեց և տարաւ Մեղուի առջևը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերևի վրայ, խելքը ժողովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի Աղանուն: Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղանուն գովել,

չնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղանին շատ լաւ իմացաւ Մեղուի միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ թուաւ գնաց, որ աւրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

3. Երախտագիտութիւն.

Մի օր մեր Մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և տղտղալով Աղանուն գովում: Մեղուի հանդէպ, մի ծառի վրայ, նստած ննջում էր ծանօթ Աղանին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կուացրած, չար օձի նման սողում սուս ու փուս դէպի Աղանին: Մեղուն հասկացաւ, որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին, իր բարեբարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց: Հէնց մատը դրեց

կայծառի ոտքին և ուղեց քաշել, գործը վերջացնել, այդ իսկ բուսէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքն այնպէս խայթեց, որնա վեր ցատկեց: Նրա հրացանը նշանից շեղեց և իր թնդիւնով անմեղ Աղանուն քնից զարթեցրեց ու տեղից թռցրեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց ազատեց:

Ինչ որ ցանես, այն կը հնձես:

Արած լաւութիւնը չի կորչի:

Փոքրիկ Գառը.

Մէկ փոքրիկ գառը, ձիւնի նման մաքուր սպիտակ, Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի. Դաշտը որ հասաւ, սկսեց թռչել բարերի տակ, էլ չէր ուզում փոքր միջոց հանգիստ նստի. Այս ու այն կողմ վազվզելով չափ էր ընկնում,

Թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:

— Ո՞րդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը.

Ձգոյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:

Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարցնում,

Իր խաղալն ու վազվզիլն է շարունակում:

Եւ վերջապէս երբ մօր խօսքին ականջ չարաւ,

Սարի գլխին իր գծութեան պատիժն առաւ.

Մի մեծ քար կար այնտեղ ընկած. նրա ծայրում

Մեր գառնուկը թռչկոտալով խաղ էր անում,

Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորեցաւ,

Ոտքի մէկը տակովն էլաւ, կոտրեցաւ:

Մեղուն և հաւը.

Հաւը Մեղուի վրայ ծիծաղելով ասաց մէկ անգամ.

— Ի՞նչ անշնորհք ճանճես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս:

— Իսկ դու, Հաւիկ մարիկ, ի՞նչ ես շինում, հարցրեց Մեղուն:

— Մի՞թէ չըզիտես, թէ ի՞նչ եմ շինում ես: Քեզ նման պարապ-սարապ չեմ տրդտողում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձու. գիտես մէկ ձուն բանիսն է:

Գիտեմ, գիտեմ, Տասկացայ: Բայց ես
մինչև հիմայ կարծել եմ, թէ դու օրը հա-
րիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու
ածել, անխելք մեղու:

— Հապա եթէ քո ածածը ընդամենը
մի ձու է, էլ ինչու ես հարիւր անգամ
կըրկըչում, թէ հայ, հարայ, լսեցէք, իմա-
ցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով
այդքան կրկնալուն մի ձուն շատ քիչ է:
Սյնպէս չէ, խմատուն, Հաւիկ մարիկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում, դ՞ու, որ
իմ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ, քեզ պէս կըր-
կըչալով չեմ յայտնում ուրիշներին: Ես, գը-
լուխա քաշ գցած, մեղր եմ շինում: Գիտե՞ս
ինչ է մեղրը: Իա հաւի կերակուր չէ, քո
խելքի բանը չէ, Հաւիկ մարիկ:



Պսակներ:

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ Տեղութեան.

Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վրայ:

Ազնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքուշ հօտ անուշիկ:

Օրինակ անմեղութեան,
Իաշտի սիրուն դու շուշան,
Եկ, զարդ եղիր մեր պարին,
Եկ, միացիր մեր երգին:

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թող ոստը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին:

Սիրուն կանաչ պսակին
Թող միանանք, բարեկամք,
Եւ յոյսերս անբաժան
Մնան մեզնից յաւիտեան:

Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,
 Ես ծաղիկ եմ անուշ հոտով,
 Թէև տունկս փոքրիկ է՝ ցած,
 Սրտներում միշտ թաք կացած,
 Բայց իմ փունջս ամենի տան՝
 Թէ աղբատի, թէ մեծատան,
 Իբրև դարնան առաջին զարդ,
 Կարէ տեսնել ամենայն մարդ.
 Ես եմ սիրուն դարնան գուշակ,
 Իմ անունս է մանուշակ:

Ոսկի և երկաթ.

Ոսկին, երկաթին արհամարհելով, ասաց
 մէկ անգամ. — Երանի գիտենամ, դու ինչա-
 ցու ես, որ մետաղների կարգն ես ընկել-
 քո սև ու ժանգոտ երեսովդ մարդու վրայ
 զզուանք ես բերում: Նայի՛ր ինձ վրայ-
 տես՝ ի՞նչպէս գեղեցիկ եմ փայլում, ինչպէս
 շողշողում: Նայի՛ր մեր սիրուն օրիորդների
 ու հարսների ականջներին ու մատներին,
 դու կրտեսնես իմ փառքն ու պատիւը.
 Նայի՛ր նրանց ճակատների շարքերին, դու

կրտեսնես իմ փայլն ու գեղեցկութիւնը.
 Նայի՛ր նրանց պարանոցներին ու կուրծքերին,
 դու կրտեսնես իմ մանեակների ու շղթա-
 ների նրբութիւնը: Չեմ հաշոււմ ապարան-
 ջանները, գնդասեղները, գիտեմ որ դու
 այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այդպէս
 բնբուշ բաների վրայ ոչ ճաշակ ունիս, ոչ
 հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց Ոսկուն:

— Ես, չեմ ուրանում, Ոսկի աղա, որ
 դու գեղեցիկ ես. ամեն բանի զարդն ու զար-
 դարանքը դու ես. գինըդ շատ բարձր է,
 աղբատի բան չես. բայց ինչո՞ւ ես չափիցդ
 դուրս գոռոզանում: Ի՞նչ սիրուն օղակներդ
 ոչ ականջի լսելիքն են աւելացնում, ոչ մատ-
 ներին ու կոներին զօրութիւն ու ժրութիւն
 տալիս: Ճակատների փայլուն շարքերը դը-
 խին խելք չեն տալիս. ոչ կուրծքերի նուրբ
 մանեակները սրտին գութ ու խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ բեզ
 այդչափ պատիւ են տալիս, բեզ համար հալ-
 ւում, մաշում ու բարակացաւ բնկնում: Իմ
 մի փոքրիկ առեղը քո բոլոր զարդարանք-

ներից աւելի է օգուտ տալիս: Գիտե՞ս, Ոսկի
 աղա, ի՞մ փորրիկ ասեղը քանի՞ տուն է
 պահում, քանի՞ որբի կերակրում: Ի՞մ խոփն
 ու ձեռքը ամբողջ աշխարհքին հաց են
 տալիս:

Մարդիկ ինչ որ շինում են, կամ պէտք
 է կտրեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք
 է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ
 պէտք է կարկատեն: Ի՞մ ուրազն ու կացինը
 որ չըլինին, ի՞մ դուրը ու շաղափը, ի՞մ սղոցն
 ու մուրճը, ի՞մ կտրիչն ու խարտոցը — էլ
 կարո՞ղ էին մարդիկ քար քարի վերայ դնել,
 փայտ փայտի վրայ: Ս. հարցադպէս պարծենկոտ ես գու, Ո՞ս-
 կի աղա. քո փայլից կուրացած՝ ուրիշի լա-
 ւուծիւնը չես տեսնում:

Արշակի շարագրութիւնը.

Երկար ժամանակ սպասում էի, թէ
 ե՞րբ պէտք է ինձ ուսումնարան տանեն:
 Աւսումնարանի մտտովս անցնելիս՝ որ լսում

էի աշակերտների երգելու ձայնը, սիրտս մի
 ուրիշ կերպ էր դառնում, մտքուս ասում
 էի. ա՛խ ե՞րբ կըլինի, որ ես էլ սրանց մէջը
 լինիմ, սրանց զգացողութեամբ, սրանց պէս
 երգեմ, սրանց հետ խաղամ. արդեօք կար-
 ժանանամ այն օրին:

Վերջապէս փափազիս հասայ: Հայրիկս
 մի առաւօտ ինձ յայտնեց, թէ երկուշաբ-
 թի օրը քեզ տանելու եմ ուսումնարան,
 և այսօր պէտք է գնամ քո ուսման պի-
 տոյքներն առնեմ: Սյն օրն էլ ես հաց չը-
 կերայ չափազանց ուրախութիւնիցս:

Երեկոյին հայրս եկաւ տուն: Ի՛նչ ասես
 որ չէր առել ինձ համար. — թուղթ, թա-
 նաք, թանաքաման, դասագիրք, տեսակ-
 տեսակ գրչածայրեր, գրչակոթեր, գրա-
 տախտակ, բարեգրիչներ, մատիտներ, մի
 քառակուսի բանոն, մի սիրուն գրչահատ:
 Բոլորը ջոկ-ջոկ թղթերում փաթաթեցի
 ու դրի պահարանումս, մինչև հասաւ եր-
 կուշաբթին՝ ուսումնարան գնալու օրը:

Նոր տարի.

Ահա հասաւ նոր տարի,

Հետը բերաւ նոր բարի.

Մանր տրդոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր տղայքն են ուրախ,
Ունին կաղին, գողինաղ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, յունապ և ընկուզ:

Մանր տղայք, չրմոռնաք,
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօգնական:

Նորա հայր ու մայր չունեն.
Սև չոր հացի կարօտ են.
Աղքատներին ողորմած
Եղէք՝, կասէ ձեզ Աստուած:



Մանկական խաղ՝

Ա. Աշակերտ

(ասում է անգործ մանկանը)
Ո՛վ դու մանուկ ծաղկահասակ,
Հերիք անգործ պարապ ման գաս.
Զուր մի կորցնիր ոսկի ժամերդ,
Թէ չէ տղէտ, բիրտ կըմնաս:

Բ. Աշակերտ

Խղճա՛, խղճա՛ ըր օրերին,
Արդէն անցաւ ըր ութ տարին,
Ի՞նչ ես սովրել թափառելով զմեծս,
Հասկացել ես չարն ու բարին:

Գ. Աշակերտ

Զէ որ մեզք է խղճուկ հայրդ,
Որ կախատի միշտ անդադար,
Թէ ինչ է՝ իւր որդին մի օր
Գառնայ լաւ մարդ իրան համար:

Աշակերտաց խումբը

Գոնէ նայիր ու մեզ տուր քիչ
Աշխատութեան օրինակ,
Եւ մի անդին ժամանակը
Փշացընիլ շարունակ:

Եկ, եկ, հերիք պարապը չըջնի,
 Դորանից քեզ օգուտ չըկայ.
 Եկ վարժարան, կարգն մեզ հետ,
 Որ խեղճ հայրըդ ուրախանայ:

(ցնաման ճղորմա ի նոսա)

Անգործ մանուկ

Ինչի կրգամ ձեր վարժարան,
 Որ գուր գերի ես դառնամ.
 Ազատ, ուրախ փողոցներում
 Լաւ չէ խաղամ ու ման գամ:

Աշակերտաց խումբը

Մենք էլ երբ բոլորովին
 Դասներս լաւ կըսերտենք,
 Այն ժամանակ ազատ ուրախ
 Խաղ կըխաղանք ու կ'երգենք:

Անգործ մանուկը

Հապա որ ձեզ վարժապետը
 Միշտ կըծեծէ, կըպատժէ,
 Մի՛թէ այդ վատ պատժարանը
 Գալ ու նստելը արժէ:

Խումբը

Այստեղ ոչ թէ մեծ ու պատիժ
 Այլ ուսում են մեզ տալին,
 Միայն ծոյլ վատ աշակերտը
 Նախատում է ու պաղիս:

Անգործ մանուկը

Հապա որ միշտ հրամանով
 Դուր կըկազմենք, կընստենք,
 Եւ ինձ նման ուզած ըսպէս
 Ազատ ման գալ կարող չէք:

Խումբը

Ով որ չունի կարգ ու կանոն,
 Նա աւուժ է անկերթ մարդ.
 Կարգ, կանոնը մանկանց համար
 Են զովական սիրուն զարգ:

Եկ, ասում ենք, եկ վարժարան,
 Ձեռ կշտանալ թափառելով.
 Ում ուզում ես՝ դնա, հարցուր,
 Մարդ կըգառնաս ուսումով:

Անգործ մանուկը

Ես էլ կրգամ, ես էլ կրգամ,
 Ել չեմ չըջիլ պարապ, զոր
 Ես էլ ձեզ հետ միշտ կըկարդամ,
 Ել չեմ ընկնիլ դռնէ դուռ:

Խումբը

Եկ մեզ մօտ, եկ մեզ մօտ,
 Քեզ կ'ընդունենք մեծ սիրով.
 Միասին, միասին,
 Խաղանք, խնդանք երգելով:

Գրողը

Յկէք, եղբարք, թե թեի տանք,
 Իրար գրկենք, ուրախանանք,
 Քանի այդպէս դեռ մանուկ ենք,
 Ուսում առնենք, խնդանք, խաղանք,
 Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
 Ուրախ երգենք ու խաղանք:

Ոչ որ չունի մեղի նման
 Ուրախ օրեր, գուարթ ժամեր,
 Աշակերտաց կեանքն է անհոգ,
 Սիրտն է մարուր, գործն օգտաբեր:
 Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
 Ուրախ երգենք ու խաղանք:

Կեցցէ, կէցցէ մանուկ հասակ,
 Կեցցեն ուսում, խաղի ժամեր,
 Կեցցէ յաւետ մեր վարժարան,
 Կեցցենք և մենք, աշակերտներ:

Պար բռնենք ու երգենք,
 Քանի որ իրար հետ ենք,
 Տրայ լայ, լայ, լայ, լայ, լայ,
 Տրայ լայ, լայ, լայ, լայ, լայ:




Տղայոց աղօթք.

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մար-
 զի. Իո՛ւ ինձ ամեն օր տաս հազար բարի,
 — կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ
 մայր, մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղ-
 բայր: Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ի՞նչ տամ
 Քեզի. առջևըդ կրնկնիմ, կենամ աղօթքի.
 ,Շնորհըդ տուր ինձ, որ ծնողներիս, ու-
 սուցիչներիս և իմ մեծերիս լինիմ սիրելի,
 իսկ Քեզ հաճելի՛:

Առաւօտեան աղօթք.

Ո՛վ տէր մեր գթօտ,
 Իո՛ւ լոյս առաւօտ,
 Ծագի՛ր և մեզ մօտ
 Քո լոյսդ անաղօտ:
 Թող լուսաւորւին
 Մեր միտք ու հոգին,
 Որ Քո լոյս անւան
 Լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն:




Հայր մեր.

Հայր մեր որ երկնքումն ես, սուրբ լի-
նի քո անունը. զայն քո թագաւորութիւնը.
քո կամքը լինի երկրիս վրայ էլ, ինչպէս որ
երկնքումն է: Մեր ամենօրւայ հացն մեզ
այսօր էլ տուր: Թող մեր այն պարտքերը,
որ քեզ պարտասկան ենք, ինչպէս որ մենք
թողում ենք մեզ պարտ եղողներինը: Թող
չըտաս, որ մենք փորձանքի մէջ ընկնինք,
այլ փրկիր մեզ չար բաներից, որովհետեւ
միայն դու ունիս յաւիտենական թագաւո-
րութիւն, զօրութիւն և փառք. — ամէն:

Տէրունական աղօթք.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղի-
ցի անուն քո. եկեօցէ արքայութիւն քո,
եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի:
Ձհաց մեր հանապազօրը տուր մեզ այսօր:
Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թո-
ղումք մերոց պարտապանաց, և մի՛ տա-
նիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ
ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրու-
թիւն և փառք յաւիտեանս. ամէն:

— Ե Ե Ե Ե —



218



ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԳԵՆԵՆԻ ԳՐԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.	Աղայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի, ա. տարի . . .	25 կ.
2.	» Ուսումն Մայրենի Լեզուի, բ. տարի . . .	40 կ.
3.	» Ուսումն Մայրենի Լեզուի, գ. տարի . . .	55 կ.
4.	Գեորգրէկեան՝ Փարսիական թուար. խնդիրները՝ Ամբ. թուար .	40 կ.
5.	» » » կատարակ թուար .	50 կ.
6.	Թումանեանց՝ Начальная Книга Русского Языка .	25 կ.
7.	Մանգրինեան՝ Նահապետական Աշխարհ . . .	60 կ.
8.	» Հենչէլի՝ բանաւոր և զրաւոր հաշուերու խնդիրներ, առաջին և երկրորդ տարի .	40 կ.
9.	» Բանաւոր և զրաւոր հաշուերու խնդ. գ. տարի .	50 կ.
10.	» Ընտանեկան Աշխարհ	25 կ.
11.	» Գրեցագրական Աշխարհ	30 կ.
12.	Տէր-Ղեւոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . . .	35 կ.
13.	» Մայրենի Լեզու, երկրորդ տարի	40 կ.
14.	» Մայրենի Լեզու, երրորդ տարի	50 կ.
15.	» Մայրենի Լեզու, չորրորդ տարի	65 կ.
16.	» Մայր. լեզուի բաց. ձևաձևերը. ա. տարուայ սպառուած	
17.	» Մայրենի Լեզուի քերականութ. տարեբեր, մասն առաջին	30 կ.
18.	» Մայրենի լեզուի քերականութեան տարեբեր, մասն երկրորդ	40 կ.
19.	» Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ.	50 կ.
20.	» Սրբազան պատմութիւն նոր Կտակարանի	50 կ.

1. Գրքերի լիճառու մը կանխիկ է: Ապառիկ ոչ ոքի գրք չենք ուղարկում, բայց ցանկացողները համար գրքերի արժէքը կարող ենք վերադիւրանել, որ նոքա վճարեն այն փոստային վարչութեանը կամ կանխորին, որը միջոցով պիտի ստանան գրքերը, ծրարը կամ սնդուկը:

2. Մեր հրատարակութիւններէն զատ ուրիշ գրքեր պահանջողները պատուէրները անկատար կը մնան:

Դիմել՝ Николаю Теръ-Гевондянъ. Тифлисъ.
Հասցէս փոստատանը յայտնի է:

218

2013 3202



